

ՄՏԵՓԱՆ ՄՏԵՓԱՆՅԱՆ*Պաշտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***ՀԱՅՈՅ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ
ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՄԸ**

Հայերի ցեղասպանությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացվեց աննախադեպ բարբարոսական ձևով: Այսպես կոչված, ռազմական նկատառումներով, դեպի արտագիայի (տեղահանության) պատրվակով արևմտահայությունն իր դարավոր հայրենիքից հակամարդկային բոլոր միջոցներով արտաքսվում էր Միջագետքի անապատները և մասնավորապես Տեր-Ձոր (արաբերեն՝ Դեր էզ-Ձոր): Հայերի տեղահանության բազմաթիվ ակնատեսներ վկայում են, որ երիտթուրքական կառավարության կազմակերպած այդ հրեշավոր քայլը նշանակում էր հայության զանգվածային բնաջնջում: Թուրքական զինվորականությունը և նրա գործիք քրդական հրոսակախմբերը ամենագազանային ձևով տանջահարում ու սպանում էին հայ երեխաներին, կանանց և անպաշտպան տղամարդկանց: Հայկական կոտորածների ականատես գերմանացիներից մեկը պատմում է, որ «թուրքերը գերազանցում էին բոլոր տիպի դաժանությունները: Նրանք դաժանաբար տանջամահ էին անում, խոշտանգում կանանց ու տղամարդկանց, ծերերին ու երեխաներին, սպանում էին կացիներով կամ խեղդում զանազան միջոցներով, հողի կանանց ծծում էին հրացանների կոթերով մինչև նրանց մահանալը, իսկ երիտասարդ կանանց նվիրում էին թուրքական և գերմանական սպաներին»¹: Սեկ ուրիշ գերմանացու նկարագրությամբ, «խոշտանգումներից սպանված հազարավոր հայերի դիակներ կարելի էր տեսնել Եփրատի ջրերում: Անհամար հայերի քշում-տանում էին անմարդաբնակ վայրեր, երիտասարդ ամուսիններին հեռացնում էին միմյանցից, կանանց բռնաբարում էին ամուսինների աչքերի առաջ, իսկ վերջիններիս՝ սպանում արատավորված կանանց ներկայությամբ»²: Գերմանացի պատուր (բողոքականների քահանա) Ֆիշերը պատմում է, որ «Վանի շրջանի որբանոցի մի խումբ հայ աղջիկների կախեցին ծառերից և սկսեցին քերթել գլխների կաշին... Մի կնոջ նորածին երեխային կացնով մի քանի մասի բաժանեցին և մոր բերանը մտցնելով՝ խեղդեցին: Որբանոցի մյուս աղջիկներին արատավորեցին և սպանեցին»³:

Այդ դաժանություններին զումարվում էին նաև քաղցն ու հիվանդությունները, որոնց զոհ դարձան հարյուր հազարավոր հայեր:

Տեր-Ձորում հայկական կոտորածները, բյուրավոր հայերի նահատակու-

¹ Sächsisches Hauptstaatsarchiv Dresden, Außenministerium. Akten-Nr. 1952, Bl. 76.

² Ibid.

³ Deutsches Zentralarchiv. Historische Abteilung 11. Merseburg, Repositor 89. 2.2.1. Königlichches Geheimeres Zivil Kabinett. Akten-Nr. 1340. Bl. 192.

թյունը երիտթուրքական կառավարողների կողմից հայ ժողովրդին պատճառած մեծագույն ողբեգություններից է, որը չի կարող ջնջվել մայրկության հիշողությունից:

Հայերի զանգվածային ցեղասպանության մասին ցավով ու պատկերավորությամբ է գրել եղեռնից մազապուրծ փրկված Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանը. «Եթե հայ նահատակներու զանկերեն լեռ մը բարձրանար, ապահովաբար շուք պիտ տար ան սուրբ Արարատի հավիտենական ծյունի երկնաբերձ կատարին...»⁴:

Իր «Հայ Գողգոթան» գրքի առաջին հատորի առաջաբանում Գրիգորիս Պալաքյանը հայկական կոտորածները հետևյալ ձևով է բնութագրում. «... զի մարդկորեն անհնար է նկարագրել ահավոր և անպատմելի Մարտիրոսագրությունը մեկ միլիոնե ավելի մեռնող զավակներուդ: Եթե երկրագնդի բոլոր ծովերը թանաք, դաշտերը՝ թուղթ, և եղեգները գրիչ դառնային, դարձյալ մարդկորեն անհնար էր նկարագրել քու փշալից արյունալից վերելքդ դեպի հայ Գողգոթային»⁵:

Հայերի ցեղասպանության ականատես, Թուրքիայում ամերիկյան դեսպան Դ. Սորգենթաուն իր հուշերում գրել է. «Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, որքան այդ կոտորածները: Անցյալում նշմարված մեծ ջարդերն ու սարսափները գրեթե ամենշան են թվում 1915 թվականի հայ ազգի կրած տառապանքների համեմատությամբ»⁶:

Աշխարհի տարբեր լեզուներով հրապարակված բազմաթիվ փաստաթղթերի և ուսումնասիրությունների պատմագիտական ու քաղաքագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ 20-րդ դարի ցեղասպանությունների շարքում հայոց ցեղասպանությունը առաջին զանգվածային ցեղասպանությունն է, և դրա միջազգային ճանաչումն ու դատապարտումը պատմական դաս է համայն մարդկության համար, մոր ցեղասպանությունների կանխման համար:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ երիտթուրքական պարագլուխները կազմակերպեցին և իրագործեցին 20-րդ դարի առաջին մեծ ոճրագործությունը՝ հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը, Յո. Լեփսիուսը, ի պաշտպանություն արևմտահայության, տիտանական գործունեություն ծավալեց: Նա բազմակողմանի օգնություն կազմակերպեց արևմտահայությանը: Նրա կոչով գերմանական հասարակայնությունը, բացի հագուստից և դեղորայքից, հայերին օգնելու համար պատերազմի օրերին 172000 մարկ հավաքեց⁷:

Արևմտահայության ցեղասպանության ամենասարսափերի օրերին, 1915

⁴ Տեր-Ձոր լոյս հազաւ: Տեր Ձորի Սրբոց Մահատակաց եկեղեցւոյ օծման առիթով, 5 մայիսի 1991թ., Անթիաս-Լիբանան. էջ 15:

⁵ Պալաքեան Գրիգորիս: Հայ Գողգոթան: Դրվագներ հայ Մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տեր-Ձոր: 1914-1920. Ա. հատոր. Վիեննա, 1922. էջ 6:

⁶ Morgenthau H. Ambassador Morgenthau's story. Garden-City-New York. 1918, p. 325.

⁷ «Flugblatt der Deutschen Orient Mission», 1917, Potsdam. S. 7.

թվականի հուլիսին: Յո. Լեփսիուսը կատարում է խիզախ ու համարձակ քայլ, գերմանիայից մեկնում է Թուրքիա և Ստամբուլում, մեծագույն ջանքեր գործադրելով, համոզիպում ենվեր փաշային: Մեծ մարդասերի ու հայասերի Լեփսիուսի և մեծ ոճրագործի ու հայատյացի զրույցը բավականին երկարատև էր: Այն պատկերավոր ձևով շարադրված է Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» գրքում:

Հանդիպման սկզբում Յո. Լեփսիուսը թուրք փաշային ներկայանում է որպես գերմանական արևելյան առաքելության նախագահ և նշում, որ արտաքին գործոց նախարարությունը, ռայխսկանցլերը հետաքրքրություն են ցուցաբերում իր այցի նկատմամբ, քանի որ վերադառնալիս հայակական հարցի մասին զեկուցումով հանդես է գալու Ռայխստագի պատգամավորների առջև: Յո. Լեփսիուսը անառարկելի փաստեր է բերում հայկական ջարդերի մասին, վկայակոչում Թուրքիայում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուին, իսկ թուրք փաշան որպես պատասխան հայտարարում է. «Պարոն Մորգենթաուն հրեա է, իսկ հրեաները միշտ էլ մոլեռանդորեն պաշտպան են կանգնում փոքրամասնությանը»⁸:

Գերմանացի մարդասերը անհողողող շարունակում է. «Կարևորը Մորգենթաուն չէ, այլ իրողությունը: Իսկ իրողությունը Ղուք չեք ժխտի, չեք էլ կարող ժխտել: Հարյուր հազարավոր մարդիկ արդեն տարագրության ճանապարհն են բռնել: Իշխանությունները միայն զաղթից են խոսում: Բայց ես կպնդեմ, որ դա, մեղմ ասած, բառի չարաշահում է, ուրիշ ոչինչ: Կարելի՞ է գրչի մի հարվածով հողագործներից, արհեստավորներից, քաղաքաբնակ մարդկանցից ու մտավորականներից կազմված մի ժողովուրդ աքսորել Սիջագետքի մի անապատ, օվկիանոսի պես անծայրածիր, ամայի վայրեր, որտեղից նույնիսկ Բեդվին ցեղերն են փախչում... Եվ դա միայն պատրվակ է: Տեղական իշխանություններն այնպես են իրագործում աքսորը, որ թվառեներն առաջին իսկ ութ օրվա ընթացքում արդեն սովից, ծարավից, հիվանդություններից մեռնում են կամ խելագարվում: Եթե ոչ զինվորականները, ապա քրդերն ու ավազակները սպանում են անպաշտպանունակ պատանիներին ու տղամարդկանց, իսկ մատղաշ աղջիկներին ու կանանց բռնաբարում են, առևանգում...»⁹:

Թուրք գեներալը իրեն հատուկ երկերեսանությամբ բացականչում է. «Շատ ցավալի բաներ են, բայց մի մեծ պետության գերագույն հրամանատարը պարտավոր է ապահովել իր երկրի ռազմաճակատային գոտու անվտանգությունը»¹⁰:

Հայերի դեմ ոճրագործությունն արդարացնելու նպատակով ենվեր փաշան ավելացնում է. «Պարոն Լեփսիուս, մի՞թե Ղուք չէիք գործադրի ամեն միջոց, որպեսզի արտաքին թշնամիների աշխարհով պաշարված, ծանր պատերազմի մեջ քաշված ձեր ազգը ազատեիք ներքին թշնամուց (նկատի ունեն արևմտահայությանը – Ս. Ա.)»¹¹: Այս խոսքերից հետո Յո. Լեփսիուսը

⁸ Վերֆել Ֆ., Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964, էջ 139:

⁹ Նույն տեղում. էջ 139-140:

¹⁰ Նույն տեղում. էջ 140:

¹¹ Նույն տեղում. էջ 140:

Էնվեր փաշայի հետ հանդիպումից շուրջ մեկ ամիս անց Յո. Լեփսիուսը կրկին հայտնվում է Կոստանդնուպոլսում: Այդ ժամանակ արդեն սկսվել էր Մուսա լեռան հերոսամարտը: Այս անգամ էլ նա շարունակում է իր համարձակ քայլերը: Հանդիպում է Պատրիարք Ջավեն Սրբազանին, նրանից տեղեկանում իր բացակայության ընթացքում հայերի հետ կատարված ողբերգական դեպքերի մասին: Երբ իմանում է, որ հայերը բարձրացել են Մուսա լեռ, դիմել են ինքնապաշտպանության, իրենց սխրանքերով պարտության են մատնում, հետ են մղում գերակշիռ ուժերով թուրքերին, Յո. Լեփսիուսը բացականչում է. «Աքանչելի» է: Եթե մի երեք այդպիսի Մուսա լույս ընկներ, գործն այլ ընթացք կստանար: Այլ, Սրբազան, Երանի՜ ես Մուսա լեռան գագաթին լինեի»¹⁸:

Այդ հանդիպան մասին ինքը՝ Պատրիարքը, իր հուշերում գրում է. «Կեդրոնական վարժարանի տեսուչ փրոֆ. Աստուածատուր հաջատրեանը, որ տակաւին չէր աքսորուած, օր մը ինձի հաղորդեց, թէ Գերմանիայէն Պոլիս եկած էր տոքթ. Լեփսիուս՝ հայասերը և ինձի այցելել կ'ուզէր: Տրուած ժամադրութեան համաձայն տոքթ. Լեփսիուս պատրիարքարան եկաւ: Երկուքս ալ ընկճուած էինք, ես ժողովուրդիս աղետը տեսնելով՝ անճար մնացած և տոքթ. Լեփսիուս, իր առաքելութեան մէջ ծախողած: Պատմեցի իրեն զաւառի ժողովուրդին աղետը՝ որքան որ տեղեկացած էի, և իմ կատարած դիմումներս թուրք նախարարներուն և գերման դեսպանին, որ խոստացած էր, թէ «ոչ մեկ հայու քիթը պիտի արնուի» մինչև հիմա բոլոր ժողովուրդը քարոզակոտոր կ'ըլլար: Տոքթ. Լեփսիուս, ինքն ալ պատմեց իր դիմումները թուրք նախարարներուն և դեսպան Վանկենհայմին մօտ և յուսահատ իր դառնալու ստիպուած ըլլալը: Փոփկաց գերման մարդասերը՝ արցունքը աչքերուն մեջ «Աստուած օգնե ձեզի» ըսաւ և մեկնեցաւ»¹⁹:

Հետաքրքրական է, որ Յո. Լեփսիուսը մտածում էր թուրք հոգևորականների միջոցով հայերին օգնություն ցույց տալու մասին: Այդ նպատակով էլ նա լինում է Կոստանդնուպոլսի մահմեդական կենտրոններից մեկում և գրույցի բռնվում: Շեյխ Սիմեդ Էֆենդին, ճանաչելով նրան, ասում է, որ Յո. Լեփսիուսը հայ ժողովրդի ջերմ բարեկամն է: Յո. Լեփսիուսը որպես պատասխան հպարտությամբ ասում է. «Ես ավելին եմ, քան սոսկ հայերի բարեկամը: Հայ ժողովրդին եմ նվիրաբերել իմ ամբողջ կյանքն ու եռանդը»²⁰:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դժվարին պայմաններ ստեղծվեցին «Գերմանա-հայ ընկերության» և նրա ղեկավար Յո. Լեփսիուսի գործունեության համար: 1915 թվականի հոկտեմբերի 9-ին «Գերմանա-հայ ընկերության» ժողովում Յո. Լեփսիուսը հաղորդում է տալիս արևմտահայության ցեղասպանության և տեղահանման մասին: Ընկերության ժողովի մասնակիցները նամակ են ուղարկում Գերմանիայի Կանցլերին, որով խնդրում էին արգելակել հայության մասսայական կոտորածներն ու

¹⁸ Լույն տեղում, էջ 587:

¹⁹ Ջավեն արքեպս., Պատրիարքական յուշերս: Վավերագիրներ և վկայութիւններ: Գահիրե, 1947, էջ 110-111:

²⁰ Վերջել ֆ., Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964, էջ 598:

տեղահանությունը: Գերմանիայի ռայխսկանցլերի ղեկանագիտական պատասխանը ոչնչով չէր խանգարում հայության ցեղասպանությանը:

Զնայած ծայրագույն պայմաններին, «Գերմանա-հայ ընկերության» նախագահ Յո. Լեփսիուսը դիմում է մեծ համաքանկության. գրում և հրատարակում է 302 էջանոց գիրք՝ «Ձեկուցագիր թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» (Lepsius J. Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei. Potsdam, 1916): Ավելի ուշ վերոհիշյալ աշխատությունը հրատարակվեց «Հայ ժողովրդի մահվան օրհասը» վերնագրով (Lepsius J. Der Todesgang des armenischen Volkes. Potsdam 1919):

1918 թվականի ապրիլի 27-ին «Գերմանա-հայ ընկերություն»-ը հատուկ դիմում ուղարկեց Ռայխստագ, որում կրկին նշվում էր կայգերական Գերմանիայի կողմից հայության ցեղասպանությունը դադարեցնելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր կատարելու վերաբերյալ: Ինչպես միշտ, այս անգամ էլ ընկերության խնդրանքը անկատար մնաց:

Հայաստանի Հանրապետության պետական արխիվներից մեկում պահպանվում են Յո. Լեփսիուսի գլխավորած «Գերմանա-հայ ընկերության» գործունեության փաստաթղթեր: Դրանք ամփոփականորեն կապված են Յո. Լեփսիուսի անձնական նախաձեռնությունների, նրա հետևողական հայա-նպաստ աշխատանքի հետ: Այսպես, 1918 թվականի ապրիլի 27-ին Յո. Լեփսիուսի ջանքերով «Գերմանա-հայ ընկերության» անունից նամակ է ուղարկվում Գերմանիայի Ռայխստագին, որում մասնավորապես վերլուծության են ենթարկվում թուրքյան զորքերի ներխուժումը Արևելյան Հայաստանի տարածքներ, որտեղ իրագործվել են հայ խաղաղ բնակչության կոտորածներ, հայկական բնակավայրերի ավերածություններ ու թալան: Փաստաթղթում նշված է, որ ուր հայտնվում են թուրքական զորքերը, կազմակերպվում են հայկական ջարդեր: Յո. Լեփսիուսն ընկերության անունից հարց է բարձրացնում Ռայխստագի առջև, թե ինչո՞ւ Գերմանիան չի արգելում քրիստոնյա հայ ժողովրդի բնաջնջումը, չէ՞ որ նա Թուրքիայի առավել ազդեցիկ դաշնակիցն է²¹:

Յո. Լեփսիուսի նախաձեռնությամբ 1918 թվականին ստեղծվում է «Հայկական խնդիրը» վերնագրով մի ամբողջական փաստաթուղթ: Նրանում համակողմանիորեն շարադրված են հայկական հարցի բոլոր հիմնական կողմերը և ցույց են տրված խնդրի լուծման ուղիները:

Փաստաթղթում նշված է, որ երիտթուրքերի պարագլուխների ջանքերով տիրապետող դարձավ այն կարծիքը, որով պահանջվում էր առհասարակ ազատվել հայերից, ոչնչացնել ու արմատախիլ անել հայ տարրը²²:

Այնուհետև այն միտքն է հայտնվում, որ եթե Գերմանիան հայերին չպաշտպանի բնաջնջման գործողություններից, որոնք իրականացնում են թուրքերը, ընդհանուր հասարակական կարծիքը պնդելու է, որ մի քիստոնեական

²¹ Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 4033, ց.1. գ. 1162^ա, ք. 140-141:

²² Նույն տեղում, ք. 148:

ժողովուրդը զոհվեց հոգուտ մահմեդական դաշնակցի: Ճիշտ է, չի կարելի հերքել Գերմանիայի քաղաքական դժվարությունները համաշխարհային պատերազմում, սակայն անվիճելի է նաև այն իրողությունը, որ Գերմանիան ոչ միայն չօգնեց հայերին, այլև նպաստեց իր դաշնակից Թուրքիային՝ բնաջնջելու հայերին²³:

Հայոց Մեծ եղեռնը ՅՈ. Լեփսիուսի կողմից հավաստի փաստաթղթերով համակողմանիորեն լուսաբանվել է «Գերմանիան և Հայաստանը» աշխատությունում: Հայկական հարցի, հայերի ցեղասպանության վերաբերյալ դիվանագիտական և այլ փաստաթղթերի այդ մեծագույն ժողովածուն լույս աշխարհ եկավ դժվարին ու բարդ պայմաններում: ՅՈ. Լեփսիուսի նախածեռնությամբ «Գերմանա-հայ ընկերության» ղեկավարությունը 1918 թվականի հոկտեմբերի 14-ին դիմեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պետական քարտուղար դոկտոր Վ. Ջուֆին՝ հայկական հարցի վերաբերյալ պաշտոնական նյութեր հրատարակելու վերաբերյալ: Վ. Ջուֆը համաձայնվում է ՅՈ. Լեփսիուսի առաջարկին այն մտքով, որ այդ քայլը կնվազեցնի Գերմանիայի մեղսակցությունը հայերի ցեղասպանության մեջ: ՅՈ. Լեփսիուսը հսկայական աշխատանք է կատարում փաստաթղթերի ուսումնասիրման, ժողովածուի մեջ տեղադրելու գործում: Հասկանալի է, որ անհնարին էր հայկական հարցի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը զետեղել մեկ ժողովածուում: Այդուհանդերձ, նա ըտրում է շուրջ 500 փաստաթուղթ, որոնց հիման վրա էլ ծնվում է «Գերմանիան և Հայաստանը 1914-1918» հայտնի գիրքը, որի գերմաներեն առաջին հրատարակությունը լույս է տեսնում 1919 թվականին Պոտսդամում, իսկ եկրորդը՝ 67 տարի անց, 1986 թվականին Բրեմենում՝ դոկտոր Թեսսա Հոֆմանի ջանքերով: Նոր հրատարակությունում ՅՈ. Լեփսիուսի առաջաբանի կողքին տեղադրված է Թ. Հոֆմանի առաջաբանը և Մ. Ռայներ Լեփսիուսի վերջաբանը: «Գերմանիան և Հայաստանը» գրքի լույս ընծայումը ՅՈ. Լեփսիուսից պահանջեց մեծ զոհողություններ ու զրկանքներ: Բացի դրանից, միայն ՅՈ. Լեփսիուսի անվիճելի հեղինակության շնորհիվ հնարավոր կարող էր դառնալ այս գրքի տպագրությունը: Հեղինակի այս նշանավոր աշխատության մեջ օգտագործված են պաշտոնական, դիվանագիտական փաստաթղթեր, գերմանական հյուպատոսների, զինվորականների, միսիոներների, զանազան գործիչների և իրադարձությունների ականատեսների վկայություններ: Պաշտոնական փաստաթղթերը մերկացնում են հայերի ցեղասպանության մեղավորներին, բացահայտում ճշմարտությունը: ՅՈ. Լեփսիուսը վերոհիշյալ գրքում համակողմանիորեն վերլուծել է հայերի տեղահանության և ցեղասպանության մասին երիտթուրքական կառավարողների ծրագրերը:

Իսկ Սալոնիկի 1911 թվականի հոկտեմբերին «Միաբանություն և առաջադիմություն» կազմակերպության որոշումը դարձավ երիտթուրքական կառավարողների քաղաքականության ու գործողությունների ծրագիր: ՅՈ. Լեփսիուսը իրավացիորեն գրում է, որ այդ ծրագրով «քրիստոնեական «հպատակ» ազգերը, որպես «թափառական» ցեղեր, ոչ միայն հնազանդորեն

²³ Նույն տեղում, թ. 157:

պետք է ենթարկվեին թուրքերին, այլև անվերապահորեն պետք է կատարեին հետևյալ պայմանները. քրիստոնեական ժողովուրդների ընդհանուր զինաթափում, հայ զինվորական ծառայողների աստիճանագրվում, հայ բժիշկների հեռացում պետական հիմնարկներից ու զինվորական հոսպիտալներից, հուլածանքների կիրառում հայ մտավորականների նկատմամբ և այլն»²⁴:

Յո. Լեփսիուսը հայերի տեղահանության և ցեղասպանության պատմությունը բաժանում է չորս հիմնական փուլի: Առաջին փուլն սկսվում է 1914 թվականի նոյեմբերի 1-ից, այսինքն թուրքիայի՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելու օրվանից, և շարունակվում մինչև 1915 թվականի ապրիլի 20-ը, երբ Վանում և նրա շրջակայքում ժավալվեցին ինքնապաշտպանական մարտեր: Երկրորդ փուլն սկսվում է 1915 թվականի ապրիլի 20-24-ին և շարունակվում մինչև նույն թվականի դեկտեմբեր: Այդ ընթացքում հիմնականում իրականացվում է հայերի թե՛ տեղահանությունը և թե՛ ցեղասպանությունը: Երրորդ փուլն սկսվում է 1915 թվականի դեկտեմբերին և շարունակվում մինչև 1918 թվականի հոկտեմբեր: Այդ ժամանակահատվածում իրագործվում է Արևմտյան Հայաստանում կենդանի մնացած հայերի բռնի իսլամացումը և ֆիզիկական ոչնչացումը: Չորրորդ փուլը վերաբերվում է կոլկասահայության ցեղասպանությանը, որն ընդգրկում է 1918 թվականի մարտի 3-ից, Բրեստ-Լիտվսկի հաշտության պայմանագրից մինչև նույն թվականի սեպտեմբերի 15-17-ն ընկած ժամանակաշրջանը²⁵:

Հատկանշական է, որ Յո. Լեփսիուսը գերմանական դիվանագիտական վավերագրի հիման վրա լուսաբանել է ոչ միայն հայերի ցեղասպանության ու տեղահանության ընթացքը, այլ նաև արևմտահայության մղած ինքնապաշտպանական մարտերը: Հատկապես հանգամանորեն է նկարագրված Վանի հերոսամարտը:

Յո. Լեփսիուսի հրապարակած փաստաթղթերում նշված է, որ գրեթե չորս շաբաթ Վանի հայերը խիզախորեն և անձնուրաց պաշտպանվում էին և դրանով էլ փրկվեցին իրենք և իրենց ընտանիքները: 1915 թվականի հուլիսի 31-ին ռուսական զորքերը անսպասելի դուրս եկան Վանից, և վանեցիները՝ նրանց հետ միասին գաղթեցին Կոկկաս²⁶:

Գրքում հետաքրքրություն է ներկայացնում Կիլիկիայի Սահակ Բ Կաթողիկոսի տեղեկագիրը Կոստանդնուպոլսի Ձավեն Պատրիարքին: Այդ փաստաթուղթը կազմվել է 1915 թվականի ապրիլի 21-ին: Հաղորդումը գերմաներեն թարգմանությամբ ուղարկված է նաև Ադանայի գերմանական հյուպատոսարան: Փաստաթղթում ականատեսների վկայությամբ ցույց են տրված Ձեթունում և Սարաշում թուրքական իշխանությունների կատարած վայրագությունները: Նշված է, որ «հայ կանանց ու երեխաներին տանջամահ էին անում, իսկ ոմանց էլ՝ բռնության ու անարգանքի ենթարկում, նույնիսկ անդամահատում էին»²⁷: Նկարագրելով տեղահանվածների աղետալի

²⁴ Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke., Potsdam. 1916, S. XVII.

²⁵ Ibid., S. LX.

²⁶ Ibid., S. XIV-XV.

վիճակը, Կաթողիկոսը գրում է. «Աքսորյալները մերկ ու քաղցած, առանց միջոցների թափառում են կիզիչ անապատում... Սիրով կուզեի մեռնել, քանի որ մահով կարող եմ մոռանալ իմ սրտի խոր վերքերը»²⁸:

Էրզրումի հայության տեղահանության ու կոտորածների վերաբերյալ գրքում բերված է գերմանական հյուպատոս Ֆոն Շոյքեներ-Ռիխտերի զեկուցագիրը, որն ուղարկվել էր Կոստանդնուպոլսում գերմանիայի դեսպանություն: Հյուպատոսը գրում է. «Չափի առնելով իրավիճակը, որպես գերմանական կառավարության ներկայացուցիչ, իմ պարտքն եմ համարում լուրջան չմատնել կառավարության (թուրքական - Ա. Ա.) բիրտ գործողությունները, նրանց հարձակումները հայերի դեմ: Սակայն քանի որ մենք չենք կարող կանխել այդ գործողությունները, գուցե կարողանանք հնարավորին սահմաններում մեղմացնել դրանք: Ես նույնիսկ ռիսկի եմ դիմում, որն իմ բնավորության բաղկացուցիչ մասն է, և այդ պարտականությունն իմ վրա եմ վերցնում»²⁹:

Կիլիկիայի հայերի կոտորածների մասին Յո. Լեփսիուսը ժողովածուի մեջ մի շարք փաստեր է բերում, որոնցում կան նաև որոշակի մեղադրանքներ գերմանական դիվանագիտական ու զինվորական իշխանություններին: Օրինակ, Ուրֆայի հայերի կոտորածներից առաջ գերմանացի Բարոն Ֆոն Օպպենհայմն առաջարկում է ֆրանսիական, անգլիական և իտալական զինվորականներին՝ ականատես լինել թուրքերի կողմից կազմակերպված բարբարոսություններին:

Յոհաննես Լեփսիուսն այդ փաստը այլանդակություն է համարում գերմանացիների կողմից³⁰:

Ուրֆայի հայության տարագրության ու կոտորածների մասին տեղեկությունները բավականին մանրամասնությամբ շարադրված են Յակոբ Կունցերի 1919 թվականի փետրվարի 20-ի (գրված է Ուրֆայում) զեկուցագրում, որը որպես հավելված իր «Deutschland und Armenien» գրքում բերում է Յո. Լեփսիուսը³¹:

Յո. Լեփսիուսի աչքից չեն վրիպել Ջեմալ փաշայի հանցավոր ու խորամանկ հայաջինջ գործողությունները: Բնութագրելով Ջեմալ փաշայի դերը Կիլիկիայի հայերի կոտորածների ու տեղահանության գործում, Յոհաննես Լեփսիուսը մատնանշում է, որ նա «չհակադրվեց կենտրոնական կառավարության կողմից հրամայված հայ ժողովրդի տեղահանությանը և նրա մնացած մասի բռնի իսլամացմանը»³²:

Ենչտ է, կոտորածների ժամանակ հրապարակվեց Ջեմալ փաշայի հրամանը հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործողությունները մեղմացնելու, մասսայական սպանություններին վերջ տալու մասին,

²⁷ Ibid., S. 53.

²⁸ Ibid., S. 57.

²⁹ Ibid., S. 120-121.

³⁰ Ibid., S. 171.

³¹ Ibid., S. 494-500.

³² Ibid., S. XI-XII.

սակայն այն մնաց միայն թղթի վրա, որովհետև հենց ինքը՝ Ջեմալ փաշան ասում էր մի բան, անում մի այլ բան: Հայերի կոտորածների մեղքը գերմանական ու թուրքական իշխանությունների վրայից վերցնելու համար գերմանական մամուլի մի շարք օրգաններ դեմագոգիկ ձևով հենվում էին Ջեմալ փաշայի վերոհիշյալ հրամանի վրա: Սակայն պետք է նկատել, որ այդ հրամանի մեջ կա մի կոնկրետ պարբերություն, որը ոչ թե կոտորածները դադարեցնելու ու արգելելու մասին է, այլ դրանք թուրքական իշխանությունների համար շահավետ ձևով կազմակերպելու մասին:

Ջեմալ փաշայի հայատյաց ու հայաքիմջ քաղաքականությունն ու գործողությունները շարունակվեցին նաև հետագայում: 1919 թվականի հոտեմբերի 5-ին գերմանական «Frankfurter Zeitung» թերթում հրապարակվում է «Zur Frage der greuel in Armenien» վերնագրով հոդվածը, որի հեղինակը Ջեմալ փաշան էր: Այդ հոդվածում նա պնդում է, թե ինքը հայերի դեմ երբեք թույլ չի տվել անկարգություններ ու խժոժություններ: Նա հիշեցնում է մի շարք դեպքեր, երբ ինքը պաշտպանել է տեղահանվածներին: Դա, իհարկե, կեղծիք է: Այդ կեղծ հոդվածի դեմ հանդես եկավ Յո. Լեփսիուսի գլխավորած «Գերմանա-հայ ընկերության» գործիչ Էվալդ Շտիրը, որն իր «Liman und Djemal» վերնագրով հոդվածում հերքում է Ջեմալ փաշայի հիշյալ կեղծիքը: Հեղինակն իր հոդվածն ուզում է հրապարակել «Frankfurter Zeitung»-ում, սակայն թերթը հրաժարվում է տպագրել հոդվածը: Այդ ժամանակ Էվալդ Շտիրը ստիպված իր հոդվածը հրապարակում է «Գերմանա-հայ ընկերության» թերթի մեջ³³, որտեղ նա բացահայտում է Ջեմալ փաշայի այն խորամանկությունը, որով նա իբր նպաստում էր որբանոցների կազմակերպմանը: Զէ՛ որ այդ որբանոցների միջոցով կենդանի մնացած հայերը մահմեդականացվում էին: Այնուհետև, երբ հայերն աշխատում էին Բաղդադի երկաթուղու վրա, Ջեմալ փաշան հանդես էր գալիս նրանց պաշտպանի դերում, իսկ երկաթուղու շինարարությունն ավարտելուց հետո ամբողջ հայությունը կոտորվեց: Այդ ժամանակ արդեն Ջեմալը չպաշտպանեց հայերին: Ուրեմն նա սկզբից պաշտպանում էր հայերին ոչ թե նրա համար, որ նրանք ապրեին, այլ այն բանի համար, որպեսզի նրանք աշխատեին Բաղդադի երկաթուղու շինարարությունում:

Այս աշխատությունում բերված փաստաթղթերի հիման վրա էլ «Գերմանիան և Հայաստանը» գրքի առաջաբանում Յո. Լեփսիուսը գրում է. «Սև ծովից մինչև Սիրիա քրիստոնյաները (հայերը - Ս. Ս.) բնաջնջված են, եկեղեցիները փակ են, դպրոցները դատարկ են, հոգևորականներն ու ուսուցիչները սպանված կամ աքսորված են... Ամբողջ Անատոլիան խլամացված (թուրքացված - Ս. Ս.) է: Օրացույցներում ջնջված են քրիստոնեական անվանումները և փոխարինված են մահմեդականներով»³⁴:

Այդ ամենը քաջ հայտնի էր գերմանական կառավարությանը և գերմանական դիվանագետներին, սակայն նրանք սկզբից նեթ հանդիսացան

³³ «Deutsch-Armenische Korrespondenz», herausgegeben von der Deutsch-Armenischen Gesellschaft (Berlin), Nr. 12, 1. Februar, 1920. S. 2-5.

³⁴ Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke., Potsdam. 1919. S. XXXVII.

ոճրագործության մեղսակիցներ: Դա ապացուցված է Յո. Լեփսիուսի գրքում բերված մի շարք փաստաթղթերով: Հայերի տեղահանության և սարսափելի կոտորածների ժամանակ թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմը կայգերական արտաքին գործերի նախարարությանն ուղարկած հեռագրում (1915 թվականի մայիսի 31-ին) նշում է. «Հայ լրտեսության առջև թուժեք կանգնելու և նորանոր զանգվածային ապստամբությունները կանխելու համար, ենվեր փաշան մտադիր է օգտվել պատերազմական (բացառիկ) վիճակից և փակել մեծ թվով հայկական դպրոցներ, արգելել հայերեն նամակագրությունը, արգելել հայկական թերթերի հրատարակությունը և այժմ հայերի ապստամբության կենտրոններից աքսորել ամեն կասկածելի ընտանիք և արտաքսել դեպի Միջագետք: Նա թախանձագին խնդրում է (խոսքը ենվերի մասին է - Ս. Ս.), որպեսզի մենք նրան խոչընդոտենք չհարուցեմք»³⁵:

Գրելով այս ամենը, հասկանալի էր, որ դեսպանը չէր կարող նկատի չունենալ այն հանգամանքը, թե համաշխարհային հասարակական կարծիքը կդատապարտեր նաև Գերմանիային՝ թուրքիայի ավագ դաշնակցին: Ելնելով այդ հանգամանքից, դեսպանն իր հեռագրում նշում է. «Այս միջոցներն անշուշտ մեծ խստություն են հայ ժողովրդի նկատմամբ: Սակայն, իմ կարծիքով, մենք դրանք ըստ ամենայնի, անշուշտ, մեղմացնելու ենք, բայց սկզբունքորեն չենք արգելելու: Ռուսաստանի կողմից հրահրված հայկական գրգռությունները (Wohlarbeit) այնպիսի չափերի են հասել, որ սպառնում են թուրքիայի գոյությանը»³⁶: Այս տողերի հեղինակն, իհարկե, լավ գիտեր, որ հայ տղամարդիկ հիմնականում թուրքական բանակում էին, իսկ քաղաքներում և գյուղերում մնացել էին միայն ծերերը, կանայք և երեխաները: Սակայն գիտակ լինելով այս ամենին, դեսպանը գրում է. «Կխնդրեմ դուրսը Լեփսիուսին և գերմանահայ կոմիտեին տեղեկություն տրվի, որ, ի նկատի ունենալով թուրքիայի քաղաքական և ռազմական վիճակը, դժբախտաբար, ամխուսափելի են հիշյալ միջոցները»³⁷: Իր հեռագրի վերջում Վանգենհայմը հաղորդում է, որ վերոհիշյալի մասին գաղտնորեն տեղեկացրել է Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի, Բաղդադի հյուպատոսարաններին³⁸: Դրանով չբավարարվեց Հ. Վանգենհայմը: Նա հասավ այն բանին, որ 1915 թվականի հուլիսի 4-ին գերմանական կառավարության անունից Կոստանդնուպոլսի կայգերական դեսպանության կողմից արվեց հետևյալ հայտարարությունը. «Արևելյան Անատոլիայի նահանգների հայ ժողովրդի դեմ թուրքական կառավարության վճռած ճնշիչ միջոցառումները թելադրված լինելով ռազմական պատճառներով և օրինական պաշտպանական միջոց հանդիսանալով, գերմանական կառավարությունը հեռու է դրանց գործադրությանը հակադրվելուց, քանի որ այդ կարգադրությունը նպատակ ունի ամրապնդելու թուրքիայի ներքին դրությունը և կանխելու զանազան ապստամբությունների

³⁵ Ibid. S 79.

³⁶ Ibid.

³⁷ Ibid.

³⁸ Ibid.

փորձերը: Այս կապակցությամբ գերմանական կառավարության տեսակետները լիովին համընկնում են այն մեկնաբանություններին, որոնք արվել են Բարձր Դռան կողմից...»³⁹:

Իրենց ձեռքի տակ ունենալով նման փաստաթուղթ, թուրքական իշխանությունները ոչ մի նշանակություն չէին տալիս Գերմանիայի այս կամ այն աստիճանավորի որևէ բողոքին: Ընդհակառակը, թուրքական կառավարող շրջաններում և մամուլի օրգաններում պրոպագանդվում էր այն միտքը, որ գերմանացիները ոչ միայն համաձայն են հայկական կոտորածներին, այլև պաշտպանում են դրանք: Անհանգստացած դրանից, կայզերական Գերմանիայի կառավարողներից մեկը՝ Յոհան Լեյբհոլց, 1915 թվականի օգոստոսի 11-ին հատուկ հեռագիր է ուղարկում Կոստանդնուպոլսի դեսպանությանը, Տրապիզոնի, Էրզրումի, Ադանայի, Չալեպի, Մոսուլի հյուպատոսություններին, որի մեջ պարզ նշում է, իրեն հասած տեղեկությունների համաձայն, թուրքական սպաները և զանազան անձիք տարբեր առիթներով պնդում են, թե իբր «մենք մեղավոր ենք այդ հանցանքի մեջ»⁴⁰:

Իր աշխատություններում, հենվելով թուրքիայում գերմանական հյուպատոսների տեղեկագրերի վրա, որոնք թուրքական ոճրագործ քաղաքականության պերճախոս վկաններն են, Յո. Լեյբհոլցը ցույց է տալիս, որ ոճրագործի ձեռքերը կասեցնող չի եղել, և որ գերմանական կառավարությունը ոչ մի ազդեցիկ միջոցի չի դիմել՝ հայերի ջարդերը դադարեցնելու համար: Գերմանական իշխանություններն աշխատել են իրենց գործողություններն արդարացնել «պատերազմական պատճառներով», իսկ տեղի ունեցած ոճրագործություններն էլ պատկերել են մենագափոխելով կամ ուղղակի սքողելով:

Յոհաննես Լեյբհոլցը մատնանշում է, որ երբ սկսվել էր հայերի տեղահանությունն ու կոտորածը, գերմանական դեսպանությունը չէր ցանկանում այդ ամենին արգելք հանդիսանալ: Յո. Լեյբհոլցն այդ բանը բացատրում է նրանով, որ գերմանական դեսպանությունը գործում էր թուրքական կառավարության ազդեցության տակ, «հավատում էր նրա հորինած ամեն տեսակի ստին» և ինքն էլ իր հերթին թուրքական դաժանությունները «ներկայացնում էր որպես արդարացի միջոցառումներ»⁴¹:

Թրքամուլ Դ. Վանգենհայմը 1915 թվականի հունիսի 17-ին ռայխսկանցլեր Բեթման Դոլվեգին գրած իր նամակում մեջբերում է ներքին գործերի նախարար Թալեաթի այն խոսքերը, որ «Բարձր Դուռը ցանկացել էր օգտվել համաշխարհային պատերազմից, որպեսզի առանց արտասահմանյան դիվանագիտության միջամտության վերջնականապես հաշվեհարդար տեսնի իր ներքին թշնամիների (տեղական քրիստոնյաների) հետ»⁴²:

Թալեաթ բեյն այդ բանը հայտարարել էր կայզերական դեսպանությանն առընթեր հավատարմագրված դոկտոր Մորդմանին: Դրանից մի քանի օր անց

³⁹ Ibid., S. 96-97. *

⁴⁰ Ibid., S. 125.

⁴¹ Ibid. S. XVI und XXI.

⁴² Ibid. S. 84.

հայ Պատրիարքը դեսպանության վերոհիշյալ աշխատակցին հաղորդել էր, որ Ռոան քայլերը նպատակ ունեն թուրքիայից հայ բնակչության շուտափույթ տեղահանմանը, առավել ևս՝ նրա ոչնչացմանը և ոչ թե ժամանակավոր վնասագերծմանը: «Տեղահանությունը նույնպես ծանր է, ինչպես և զանգվածային ոչնչացումը, և զարմանալի չի լինի, եթե հայերը վերջ ի վերջո, նույնիսկ առանց հաջողության հույսի, կսկսեն դիմադրել»⁴³:

Տեղյակ լինելով թուրքական կառավարության հակահայկական ծրագրերին ու գործողություններին, 1915 թվականի հուլիսի 7-ին Դ. Վանգենհայմը կանցլեր Բեթման Դոլվեգին հայտնում է, որ թուրքական «կառավարությունը իրականում խնդիր է դրել թուրքական կայսրությունում ոչնչացնել ամբողջ հայ ազգը»⁴⁴: Դեսպանը հաղորդում է, որ «դեռևս 14 օր առաջ հայկական բնակչության արտաքսումն ու տեղահանությունը սահմանափակվում էին մոտավորապես պատերազմական գործողությունների արևելյան թատերաբեմի մերձակա նահանգներով, ինչպես նաև Ադանայի նահանգի մի քանի շրջաններով: Դրանից հետո Ռոանը որոշում ընդունեց այդ գործողությունները տարածել Տրապիզոնի, Մամուրետ ուլ-Ազիզի և Սեբաստիայի նահանգների վրա և ձեռնամուխ եղավ իրագործելու վերոհիշյալը, չնայած այն բանին, որ երկրի այդ մասերը որևէ թշնամական ներխուժման սպառնալիքի տակ չեն գտնվում»⁴⁵:

Այդուհանդերձ, Դ. Վանգենհայմը հավատարիմ է մնում իր դիրքորոշմանը և հայերի տեղահանությունն ու կոտորածները ներկայացնում որպես «նախազգուշական լայն միջոցառումներ հայկական շարժման ծավալման նկատմամբ»⁴⁶: Վանգենհայմը նույնը պնդում էր իր հաջորդ հաղորդման մեջ⁴⁷: Ավելին, հայկական կոտորածների ժամանակ, որպես էրզրումի հյուպատոսի վկայությունների պատասխան, հրահանգ է ուղարկում, որպեսզի հյուպատոսները խուսափեն հայերին պաշտպանելու որևէ գործողություններից⁴⁸: Դրա հետ միաժամանակ, կայզերական Գերմանիայի պաշտոնական շրջանները գործադրում էին թուր միջոցները, որպեսզի Գերմանիայի, ամբողջ աշխարհի հասարակայնությանը չներկայացվեն թուրքական ոճրագործությունները և արևմտահայության ողբերգական իրադարձությունների մասին իրողությունները:

Յոհաննես Լեփսիուսը մատմանշում է, որ Արևմտյան Հայաստանի և ընդհանրապես հայերի մասին ճշմարիտ տեղեկություններ հրապարակելը գերմանական գրաքննության կողմից արգելված էր⁴⁹:

Յո. Լեփսիուսի գրքում ցույց է տրված, որ Գերմանիայում քիչ բան չտպագրվեց հայերի տեղահանության ու կոտորածների մասին, սակայն կառա-

⁴³ Ibid., S. 84.

⁴⁴ Ibid., S. 94.

⁴⁵ Ibid.

⁴⁶ Ibid., S. 63.

⁴⁷ Ibid.

⁴⁸ Ibid., S. 58.

⁴⁹ Lepsius J. Mitteilungen aus der Arbeit 1917-1918. Potsdam, 1919, S. 119-120.

վարող շրջանները ջանքեր չէին խնայում հերքելու կամ մեղմացնելու այն բարբարոսությունները, որոնք կատարվում էին Արևմտյան Հայաստանում:

Յո. Լեփսիուսը և շատ բարի կամք ցուցաբերած գործիչներ գերմանական դեսպանության միջոցով առաջարկում էին կայզերական Գերմանիայի կառավարիչներին, որպեսզի նրանք օգնեն հայերի ցեղասպանությունը դադարեցնելուն: Այդ նպատակով, օրինակ, առաջարկվում էր դեսպան Վանգենհայմին, որ նա հյուպատոսություններ հաստատեր Վանում, Բաղեշում և այլ տեղերում, որոնք իրենց վրա կվերցնեին հայերի պաշտպանության գործը: Դեսպան Վանգենհայմը ոչ միայն մերժում էր այդ առաջարկները, այլև իր դիվանագետներից մեկի՝ Շվարցի միջոցով Կանցլերին հայտարարում էր, որ Թուրքիան այն իր ներքին գործերին միջամտություն կհամարի, և դա այն դեպքում, երբ թուրքական բնակչության մոտ աննպաստ տրամադրություն էր ստեղծվել հայերի նկատմամբ⁵⁰:

Թուրքիայում գերմանական դեսպանների մեջ յուրահատուկ տեղ է գրավում կոմս Վոլֆ Մետերնիխը, որը բավականին բարյացակամ էր տրամադրված հայության հանդեպ և անձամբ դեմ էր հայկական կոտորածների քաղաքականությանը: 1915 թվականի դեկտեմբերի 7-ին, ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին Մետերնիխն անկեղծորեն գրում է. «Բողոքներն օգուտ չունեն, և թուրքական այն ժխտումները, թե իբրև նոր տեղահանություն տեղի չի ունենա, անիմաստ են...: Եթե կանխվեն, ապա դրա համար անհրաժեշտ են խստագույն միջոցներ»⁵¹:

Վոլֆ Մետերնիխը Թուրքիայում որպես գերմանական դեսպան աշխատեց 1915 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 1916 թվականի հոկտեմբերի 3-ը: Դեսպանի պաշտոնում իր գործունեության ընթացքում Վոլֆ Մետերնիխը համառորեն բողոքներ էր ներկայացնում թուրքական իշխանություններին՝ հայկական կոտորածները դադարեցնելու համար: Նա պահանջում էր, որ չվերացվեն հայկական որբանոցները, հայ աղջիկները չտարվեն հարեմներ, իսկ հայ տղաները բռնի չտեղավորվեն թուրքական որբանոցներում և չխլամացվեն⁵²: Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղղած նամակում Վոլֆ Մետերնիխը խնդրի էր դնում «մամուլի մեջ հայերի դեմ հալածանքների մասին դժգոհություն արտահայտել»⁵³:

Արժե հիշել գերմանական մեկ ուրիշ դեսպանի՝ Բերնշտորֆի գրությունը արտաքին գործերի նախարարությանը: 1918 թվականի օգոստոսի 25-ին դեսպանը գրում է, որ «եթե Հայաստանի կառավարության և բարձրագույն հոգևորականության օգնության հուսահատական կոչներն անլսելի մնան, ապա այդ հին քրիստոնյա ժողովրդի բնաջնջման պատասխանատվությունը ընդմիշտ պետք է ծանրանա Գերմանիայի և Ավստրիայի վրա: Պատմությունը չպետք է և չի կարող ընդունել, թե միջին Եվրոպայի այս երկու մեծ քրիստոնյա

50 Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke., Potsdam. 1919, S. 48, 26.

51 Ibid. S. 202.

52 Ibid.

53 Ibid.

տերությունները անկարող էին, զոհե այստեղ, որտեղ դրված էր մի ամբողջ ժողովրդի լինելու կամ չլինելու հարցը, իրենց կամքը պարտադրելու իրենց ասիական դաշնակցին»⁵⁴:

Արդարամտությամբ ու մարդասիրությամբ հայտնի էր էրզրումում կայզերական Գերմանիայի հյուպատոս Շոյբներ-Ուիլտերը: 1915 թվականի հունիսի 2-ին Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանությանն ուղղված հեռագրում նա պարզ հայտնում էր, որ Արևմտյան Հայաստանից հայերի «այդ մեծածավալ տեղահանությունը հավասազոր է զանգվածային սպանության»⁵⁵: Նա մատնանշում էր, որ «հայերի տեղահանման վերաբերյալ գլխավոր հրամանատարի հետ իր բանակցությունները դրական արդյունքի չհանգեցին: Հայկական բնակչությունը թուրք հարթավայրերից, հավանական է և էրզրումից, պետք է արտաքսվի Դեր էլ Ձորի կողմը... Ռազմական բնույթի պատճառաբանությունները չեն կարող հիմնավորել այդ գործողությունները, որովհետև տեղական հայության ապստամբության հնարավորությունը բացառված է, քանի որ տարագրյալները ծերունիներ, կանայք ու երեխաներ են: Հայերը, որոնք իսլամություն են ընդունում, չեն արտաքսվում: Իմ տեսած հայերի թողած գյուղերը քարուքանդ են արվել, ավերվել է նաև Կիզիլ վանքը, եկեղեցին ամայացվել է»⁵⁶:

Գերմանական դիվանագետների մեջ իր օբյեկտիվությամբ ու մարդասիրությամբ ուրույն տեղ է գրավում Հալեպի հյուպատոս Ռոսլերը:

Վերլուծելով արևմտահայության տեղահանության ու բնաջնջման հարցերը, Վոլֆ Մետերնիխը միանգամայն ճիշտ էր նշում, որ հայկական կոտորածները կարելի էր սկզբում կանխել և ապա դադարեցնել թուրքիայի նկատմամբ ոչ սովորական, այլ արտակարգ իրավունքներ ունեցող կայզերական Գերմանիայի կողմից, բայց կոնկրետ ու կտրուկ միջոցներով և ոչ թե դիվանագիտական նամակներով:

Հայոց Մեծ եղեռնը հանգամանորեն լուսաբանվել է Բեռլինյան հայտնի դատավարության ժամանակ Յո. Լեփսիուսի պատմական ելույթում:

1921 թվականի հունիսի 2-3-ը Բեռլինի օկրուգային դատարանում տեղի ունեցավ Թալեաթ փաշայի սպանության համար ամբաստանված ուսանող Սողոմոն Թեխլերյանի դատավարությունը: Այդ դատավարության նիստում հանդես եկավ նաև 62 տարեկան դոկտոր, ավետարանական իրավասու գրող Յոհաննես Լեփսիուսը: Նա իր ելույթում անարգանքի սյունին գամեց հայ ժողովրդի դահիճներ Թալեաթին, Էնվերին և մյուսներին, պաշտպանեց հայության արժանապատվությունը: Դատարանի առջև նա հայտարարեց, որ հայերի՝ «ընդհանուր տեղահանությունը որոշեց երիտթուրքական կոմիտեն՝ հանձինս Թալեաթ փաշայի, որպես ներքին գործերի նախարարի, և Էնվեր փաշայի, որպես ռազմական նախարարի: Այն իրագործվեց երիտթուրքական կազմակերպության միջոցով: Տեղահանությունը, ընդհանուր աքսորը, որն արդեն որոշված էր 1915 թվականի ապրիլին, վերաբերում էր իր պատմական

⁵⁴ Ibid. S. 431.

⁵⁵ Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam. 1919, S. 80.

⁵⁶ Ibid.

հայրենիքում ապրող ամբողջ հայ ժողովրդին: Թուրքիայի բնակչության մեջ պատերազմից առաջ հաշվվում էր 1.850.000 հայ⁵⁷: Իհարկե, Թուրքիայի նման երկրում բացարձակ ստույգ մարդահամար չկար: Վերոհիշյալ թիվը բերվում է վիճակագրական տվյալներից, որը համաձայնեցված է հայ պատրիարքարանի մարդահամարների հետ: Պատերազմից առաջ հայ բնակչությունը սփռված էր եվրոպական Թուրքիայում (Կոստանդնուպոլիս, Ադրիանապոլիս, Ռոդոսթո) և ասիական Թուրքիայում (Անատոլիա, Կիլիկիա, Յուսիսային Ասորեստան, Միջագետք): Հայերի մեծ մասն ապրում էր Արևմտյան Անատոլիայում, Հայկական լեռնաշխարհում, այդ ժողովրդի հինավուրց հայրենիքում, էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Սեբաստիայի, Խարբեռդի վիլայեթներում (նահանգներում): Արևմտյան Անատոլիայում բնակչության հիմնական զանգվածը կենտրոնացված էր Կոստանդնուպոլսում, Մարմարայի հարավային ծովեզերքին: Հարավային Անատոլիայում է Կիլիկիան՝ Տավրոսի տափաստանով, Ալեքսանդրետի ծովածոցի մոտ գտնվող հյուսիսային սիրիական մարզերով, որոնք հին հայկական հայրենիքի մի մասն են կազմում: Անատոլիայի ամբողջ հայ բնակչությունը բարձրագույն հրամանատարության հրամանով տեղահանվեց դեպի Միջագետքի անապատի հյուսիսային ու արևելյան եզրը՝ Տեր-ձոր, Ռակկա, Մեսքենե, Ռաս-էլ-Աին, մինչև Մոսուլ: Յո. Լեփսիուսի տվյալներով տեղահանվեց մոտ 1.400.000 հայ:

Ի՞նչ էր ճշանակում այս տեղահանությունը: Յո. Լեփսիուսը հետևյալ պարզ ու հստակ պատասխանն է տալիս. «Թալեաթի ստորագրած մի հրամանի մեջ կա հետևյալ արտահայտությունը. «տեղահանությունը՝ ոչնչացում է»⁵⁸: Ամեն ինչ տեղի ունեցավ այդ հրամանագրի համաձայն, որովհետև Արևելյան Անատոլիայի վիլայեթներից դեպի հարավ տեղահանված բնակչության միայն 10 տոկոսը աքսորավար հասավ, մնացած 90 տոկոսը սպանվեց ճանապարհին: Բացի ոստիկանների կողմից վաճառված և քրդերի կողմից առևանգված կանանցից ու աղջիկներից, մնացածը սովահարությունից ու ուժասպառությունից մահացան: Այն հայերը, որոնք Արևմտյան Անատոլիայից, Կիլիկիայից ու Յուսիսային Սիրիայից քվեցին անապատ, հավաքվեցին համակենտրոնացման ճամբարներում և ոչնչացվեցին սովից կամ պարբերական ջարդերից: Յո. Լեփսիուսը ցույց է տվել, որ երբ համակենտրոնացման ճամբարները մարդկանց նոր խմբերով էին լցվում, ոստիկանները նրանց հոծ զանգվածներով անապատ էին տանում և այնտեղ էլ մորթում: Նա մեջբերում է կատարում թուրքերի հայտարարություններից, որ նրանք համակենտրոնացման ճամբարների գաղափարին հանգել էին անգլիացիների օրինակով, որոնք նույն ձևով էին վարվում բուրերի հետ Հարավային Աֆրիկայում:

57 Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandlung gegen den des Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Salomon Teilirian vor dem Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C. J. 22/21, am 2. und 3. Juni 1921. Mit einem Vorwort von Armin T. Wegner und elmen Anhang. Berlin, 1921, S. 56.

58 Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandlung gegen den des Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Salomon Teilirian vor dem Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C. J. 22/21, am 2. und 3. Juni 1921. Mit einem Vorwort von Armin T. Wegner und elmen Anhang. Berlin, 1921, S. 56-57.

Պաշտոնապես հայտարարվում էր, որ տեղահանությունները միայն նախագ-
գուշական միջոցառումներ են, սակայն թուրք պաշտոնյաները բացահայտորեն
խոստովանում էին, որ տեղահանության նպատակը հայ ժողովրդի ոչնչացումն
է: Այնուհետև Յո. Լեփսիուսը հայտարարում է, «Ինչ որ ես ձեզ ասում եմ, բխում
է նաև կայգերական Պերմանիայի դեսպանության, արտաքին գործերի
նախարարության այն փաստաթղթերից, որոնք ես հրատարակել եմ: Պա-
հատկապես ակնհայտ է գերմանական հյուպատոսների և Կոստանդնու-
պոլսում գերմանական դեսպանների գեկուցագրերից...

Բնականորեն հարց է ծագում. ինչպե՞ս հնարավոր դարձավ, որ այդպիսի
կարծ ժամանակում մեկ միլիոն մարդ ոչնչացվեց: Պաշտոնավոր դարձավ այն
վայրագ մեթոդների իրագործմամբ, որ ապացուցվեց նաև Կոստանդնու-
պոլսում տեղի ունեցած Թալեաթ փաշայի և նրա գործակիցների դատավա-
րության ժամանակ ռազմական դատարանի բացահայտած նյութերով»⁵⁹:

Թուրքական զինվորական դատարանի կազմի մեջ մտնում էին հայերի
ցեղասպանության ականատես զորահրամանատարներ, որոնք լավ գիտակ
էին պատերազմական գործերին: Ռազմական դատարանի 1919 թվականի
հուլիսի 5-ին կայացած վճռով հայերի տեղահանության ու ցեղասպանության
բոլոր գլխավոր հեղինակները՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազիմը,
դատապարտվեցին զնդակահարության:

Այնուհետև Յո. Լեփսիուսը հայտարարեց, որ «Հայերի ոչնչացման մասին
հրամանի կատարումը ապահովվեց նրանով, որ Կոստանդնուպոլսից այն
հանձնարարվեց վալիներին (կուսակալներին - Ս. Ս.), մութեսարիֆներին
(նահանգապետներին - Ս. Ս.) և գայմազամներին (քաղաքագլուխներին - Ս. Ս.),
այսինքն՝ թուրքական տեղական իշխանությունների ղեկավարներին ու
զանազան պաշտոնյաներին:

Իր ելույթում Յո. Լեփսիուսը հանգամանորեն վերլուծել է մեծ տերու-
թյունների դիրքորոշումները հայկական հարցում: Այս կապակցությամբ էլ
հարկ է նշել, որ Յո. Լեփսիուսը միշտ չէ, որ արդարացի է Ռուսաստանի
քաղաքականության ու գործողությունների նկատմամբ: Նրա գնահատում-
ներում որոշակիորեն թերագնահատվում են Ռուսաստանի դրական դերը
հայկական հարցում և նրա հայանպաստ քաղաքականությունն ու քայլերը:
Պաշտոնապես միաժամանակ, ըստ երևույթին ստիպված, նա որոշ չափով մեղմաց-
նում է կայգերական Պերմանիայի կառավարողների և առանձին գործիչների
մեղսակցությունը հայերի ցեղասպանությանն ու տեղահանությանը:

Միաժամանակ Յո. Լեփսիուսը նշել է, որ ռուսական առաջխաղացումը
250.000 հայի կյանք փրկեց⁶⁰: Փրկված հայությունը ապաստան գտավ
Կովկասում:

Որպես հայկական հարցի փայլուն գիտակ, Յո. Լեփսիուսը Բեռլինի

⁵⁹ Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandlung gegen den des
Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Solomon Teilinian vor dem
Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C. J. 22/21, am 2. und 3. Juni
1921. Mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang. Berlin, 1921, S. 57.

⁶⁰ Թալեաթ փաշայի դատավարության սղագրության հայերեն թարգմանության մեջ նշվում է
350.000, իսկ գերմաներեն հրատարակություն՝ 250.000 (հայերեն հրատարակություն,

դատարանում համակողմանիորեն բնութագրել է այդ խնդիրը: Այդ կապակցությամբ նա ասել է. «Ավամայից մարդն ինքն իրեն հարցնում է. ինչպե՞ս հնարավոր եղան պատմության մեջ կատարված ողբերգական այդպիսի ռեպրեզնտացիան: Ես ուզում եմ փորձել պատասխանել հակիրճ:

Հայկական հարցը ինքնաձին տունն է, այլ եվրոպական դիվանագիտության պտուղն է... Դիվանագիտական շախմատային խաղի մեջ հայը կատարում էր գինձորի դեր, որին երբեմն առաջ էին մղում կամ զոհաբերում: Մարդասիրական ու «քրիստոնյաների հովանավորության» մասին խոստումները պատրվակներ էին միայն»⁶¹:

Յո. Լեփսիուսը ցույց է տվել, որ հայերի բնաջնջումը հրամայված էր երիտթուրքերի կոմիտեի գլխավոր դեմք հանդիսացող և նրա ամենաազդեցիկ գործչի՝ Թալեաթի կողմից, և հասկանալի է, որ նա ոչինչ չէր ձեռնարկի այն արգելելու համար: Այդ ամենը լիովին հաստատվում է գերմանական ու թուրքական փաստաթղթերով:

Յո. Լեփսիուսն այն հետևությանն է հանգում, որ մեծ տերությունների դիվանագիտական խարդավանքների հետևանքով նախ Արդուլ Համիդը, ապա երիտթուրքերը հայերի նկատմամբ այնպես կասկածամիտ դարձան և այնպիսի եզրակացության եկան, որ հայերի հետ այլ կերպ չէին կարող վարվել, քան նրանց ոչնչացնել: Հայերի բնաջնջումը բազմազան ձևեր ընդունեց, որոնց մասին դատարանում պատմեցին ականատեսները:

Դատարանում պատասխանելով Ս. Թեհլերյանի դատապաշտպաններ Վերթհաուերի և Նիմայերի հարցերին, Յո. Լեփսիուսը մատնանշել է, որ թուրքական կառավարողները վախ ունեին, թե Հայաստանն անկախ կդառնա և դրանով ասիական թուրքիայի գոյությունը սպառնալիքի տակ կդրվի: Նա անվիճելի փաստերով հաստատել է, որ երիտթուրքերը վաղուց ծրագրել էին ոչնչացնել այն, ինչ թուրքական չէ կամ ասենք՝ հայկական է⁶²:

Յո. Լեփսիուսը շուրջ 30 տարի հետևողականորեն զբաղվեց հայկական հարցով, հայերի ցեղասպանության դատապարտման խնդիրներով, հաստատականորեն գորավիճ կամզնեց բազմաչարչար արևմտահայությանը, մինչև վերջ մնաց հայ ժողովրդի քերմեռանդ ու անշահախնդիր պաշտպանը: Նա հաստատում կերպով մտել է հայ ժողովրդի պատմության մեջ որպես մի պայծառ անուն:

Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը (սղագրություն), Երևան, «Արևագուն», 1990 թ., էջ 103):

⁶¹ Der Prozess Talaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandlung gegen den des Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Solomon Teilinan vor dem Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C. J. 22/21, am 2. und 3. Juni 1921. Mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang. Berlin, 1921, S. 59.

⁶² Ibid., S. 61.